

24/5

С.1930/916




# ԽԱՉՎԱԿ ԿՈՐՈՂ Ե ՈԳԵՒԵԼ ԲԱՌԱԿՉՈՒԹՅՈՒՆԻՔ ԿՈՐՄԵՐ ԲԱՆԱԿԻՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺՈՒՄՈՒՆԻ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТ  
ВОЛТОНОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ԽԱՉՎԱԿ ՀԱՊԼՈՎ, ԿԵՐԵՐ, ՀՐԱՄԱՆԱՀՅՈՒԹՅՈՒՆԸ, ԽՈՍԿՈ, 1929

355.4

հ-61



СЕПТЯМВРИ 2010

С 4  
1890

366-4

б - 61

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ԻՆՉՈՎ ԿԱՐՈՂ Ե ՈԳՆԵԼ  
ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ  
ՊԱՏԵՐԱՋՄԻ ՃԱՄԱՆԱԿ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՌՈՒԴՆԵՐԻ ԿԵՆՑՐՈՒՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ, 1929

ԹՇՆԱՄԻՆ ԴԵՌ ԿԵՆԴԱՆԻ ՅԵ

Ապագա պատերազմը պահանջելու յե ամբողջ ազգաբնակչության մասնակցությունը: Ֆրոնտում թշնամու դեմ կռվելու յեն նրանք, վորոնց բանվորացուղացիական իշխանությունը կանչելու յե զորքում: Բանվորը և զյուղացին թիկունքում աշխատելու յեն պաշտպանության կարիքների համար: Բայց դրա հետ միասին ֆրոնտում զորքին հարկավորվելու յե նաև տեղական ընտակիչների անմիջական ոգնությունը, մասնավանդ ֆրոնտին մոտ գտնված բնակչների ոգնությունը: Թե ինչումն է արտահայտվելու այդ ոգնությունը, այդ մասին մանրամասն պատմում ե այս գործույթը:



59546-66

Главлит № А-41084

Зак. № 1152.

Тираж 4000 экз.

Книги. Ф-ка Центральна. Изд-ва Народов ССР. Москва, Шлюзовая наб., 6.

Հեշտությամբ չե, վոր բանվորներն ու գյուղացիները իշխանությունը ձեռք բերին: Ուուսաստանում 1917 թ. իշխանությունը գրավելուց հետո ամբողջ յերեք տարի ստիպված յեղան պատերազմել սպիտակ բանակների դեմ, վորոնք ցանկանում ելին մեր գլխին նստեցնել նախկին տերերին: Այդ տարիների ընթացքում կարմիր բանակը հիմնավորապես ջարդեց մեր բուրժուազիային: Այդ թշնամին այժմ մեզ համար վտանգավոր չե: Բայց դեռ կա ավելի ուժեղ թշնամի: Դա ամբողջ աշխարհի բուրժուազիան ե, վոր վաղուց դանակ ե սրում մեր դեմ:

Մենք ունենք շատ անտառներ, հող, ածուխ, նավթ և ուրիշ բնական հարստություններ: Այդ բարիքներն ուզում ե զավթել և տիրանալ համաշխարհային ազան բուրժուազիան: Այդ կհաջողվեր նրան ցարական իշխանության ժամանակ, յերբ արտասահմանյան բուրժուազիան մեզ անվերջ պարագերի ցանցը գցելով, պատրաստվում եր կիսագաղութ դարձնել մեր յերկրը: Սակայն մենք նոր տերեր ներս չենք թողնում և չենք ել թողնելու: Համաշխարհային բուրժուազիային այդ իհարկե դուր չի գալիս:

Ամենից շատ անհանգստացնում եւ նրան Խորհրդաշխն իշխանության և մեր տնտեսության ամրապնդումը։ Խորհրդային իշխանությունը առայժմ միակ յերկիրն եւ, ուր իշխանության ղեկի մոտ կանգնած են բանվորներն ու գյուղացիները, ուր աշխատավորներին ղեկավարում եւ կոմունիստական կուսակցությունը։ Մեր յերկրիցն եւ վոր խորհրդային և կոմունիստական «վարակը» տարածվում եւ ամբողջ աշխարհի բանվորների և գյուղացիների մեջ։ Մեր որինակը նրանց մեջ ցանկություն եւ զարթեցնում նույնպես ազատվելու կապիտալիստների և կալվածատերերի կեղեքումից և Խորհրդային իշխանություն հաստատելու իրենց մոտ։ Վերջի՞ւկերջո այդպես ել անելու յեն նրանք։ Բուրժուազիայի կործանումն անխուսափելի յե, բայց նա հույս ունի փրկվելու վոչնչացնելով աշխարհի միակ Խորհրդային իշխանությունը։ Նա զինվում եւ, պատերազմի յե պատրաստվում մեր դեմ, հարմար առիթի յե սպասում հարձակվելու համար։ Համաշխարհային բուրժուազիայի պատերազմը Խորհրդային Միության դեմ անխուսափելի յե։

Սակայն Խորհրդային Միության սոցիալիստական խաղաղ շինարարության պաշտպան եւ կանգնած հարմիր բանակը։ Նա իր ինդիրը կիրագործի, նա կպաշտպանի Խորհրդային իշխանությունը և հոկտեմբերյան նվաճումները։ Մեր Միության բոլոր աշխատավորները կոգնեն նրան այդ բանում, ինչպես վոր ողնում ելին անցած տարիների քաղաքացիական պատերազմի ժամանակ

## ԱՄԵՆ ՄԵԿՆ ԻՐ ՏԵՂՈՒԹՅ

Ապագա պատերազմի ժամանակ հարկավոր եւ լինելու մեծ բանակի բանակի համար անհրաժեշտ եւ ահազին քանակությամբ պաշարեղեն և հագուստեղեն, պուլեմյուտներ և թնդանոթներ, փամփուշտներ և ոռումբեր, ավտոմոբիլներ և այերոպլաններ, ամեն տեսակ գործիքներ։ Առանց այդ ամենի բանակը չի կարող վոչ պատերազմել և վոչ ել, իհարկե, հաղթել։

Ով վոր ցանկանում ե՞ւ վորպեսզի կարմիր բանակը հաղթի, նա պետք ե նոր պատերազմի դեպքում ավելի լավ և ավելի արագ աշխատի քան խաղաղ ժամանակ եր աշխատում։ Գյուղը պետք ե տա բանակին ավելի շատ հաց և ձիյերի համար կեր, ավելի շատ անասուններ։ Քաղաքն իր ֆաբրիկներով և գործարաններով — ավելի շատ զենք, փամփուշտներ և հագուստեղեն։ Յերկաթուղին պետք ե ավելի արագ հասցնի այդ բոլորը ֆրոնտին։

Այն ամենը ինչ վոր անհրաժեշտ ե ֆրոնտին — ապահոված ե պետական պաշարներով։ Սակայն այդ պաշարները միշտ չե, վոր հաջողվում ե իր ժամանակին հասցնել։ Պատահում են հապաղումներ, վորոնք կախված չեն մեղնից։ Իսկ յեթե ֆրոնտի համար փորեւ բան պակասի, կարմիր-բանակայինն այդ կհասկանա, զրկանքների համար չի գանգատվի և իր պարտքը, վորպես Խորհրդային պետության և աշխատավոր մաս-

սաների պաշտպանի պարտքը, կկատարի: Նա կտեսնի, վոր ամբողջ յերկիրն անխոնջ աշխատում ե ֆրոնտի համար, հոգում ե նրա մասին, կարմիր-բանակայինի մասին, աշխատում ե հեշտացնել նրա կռիվը թշնամու դեմ: Դա նրան ներշնչելու յե ուժ, կորով և քաջություն:

Բայց յեթե ֆրոնտը ստիպված լինի զրկանքներ կրել շնորհիվ մեր անփութության, անհոգության և բյուրոկրատիզմի, բանակն այդ շատ շուտ կղզա: Կարմիր-բանակայիննիր վստահությունը կկորցնի թիկունքի աջակցության նկատմամբ, կկորցնի նաև իր հավատը դեպի իր սեփական ուժերը: Նրա ձեռքերը կթուլանան, նա վատ մարտիկ կլինի: Այս հանգամանքը վոչ մի ըոպե չպետք է մոռանալ: Ամեն մեկն իր տեղում, ուր նա աշխատում ե, պետք ե միշտ հիշե, վոր ֆրոնտում գործող կարմիր բանակը սպասում ե նրա աջակցության և ոգնության:

ԽՍՀՄ բանվորներն ու գյուղացիները Խորհրդային պետություն են կառուցում: Կարմիր բանակը պաշտպանում ե նրանց խաղաղ աշխատանքը և ինքն ել մասնակցում ե այդ շինարարության: Ուստի և կարմիր բանակի և ԽՍՀՄ աշխատավորների մեջ զոյլություն ունի ամուր, անկաքտելի կապ և փոխադարձ աջակցություն:

Կարմիր-բանակային զորամասերը, յերբ վոր ժամանակ և հնարավորություն ունեն, միշտ, թե խաղաղ և թե կռվի պարագաներում, ոգնել են և միշտ ել

ոգնելու յեն տեղական բնակչության: Զինակոչի գնացածի ընտանիքին և չքավորին նրանք ոգնել են հերկելու, հնձելու և հացը հավաքելու գործում, խրճիթը նորոգելու գործում, և այն: Ամբողջ գյուղի համար նրանք նորոգել են կամուրջներ, ճանապարհներ, դպրոցներ, փորել են ջրհորներ և այլն: Զինվորական բժիշկներն ու անասնաբուժերը ոգնություն ենին հասցնում բնակիչներին և անասուններին: Իրենց հերթին՝ բնակիչներն ել պետք ե վոր անհրաժեշտ ոգնություն և ամեն աջակցություն հասցնեն կարմիր բանակին իր մարտական աշխատանքում: Ֆրոնտի մոտերքը բնակիչներն իհարկե ալելի մոտ են զործիչ զորամասերին: Զորքերի մարտական աշխատանքը կատարվում ե բնակչության աչքի առաջ: Բնակչության հասցրած, մանավանդ իր ժամանակին հասցրած ոգնությունից ե հաճախ կախված լինելու մեր զորքերի հաղթությունը: Իսկ վճր բանվորը կամ վճր գյուղացին չի ցանկականում կարմիր բանակի հաղթությունը:

Բայց ինչ ոգնություն կարող ե հասցնել կարմիր բանակին բնակչությունը նաև մարտական պարագաներում: Անա թե ինչ ոգնություն, լսեցեք:

### ԿԱՆԱՆՑ ՔԱՐԱՎԱՆՆԵՐԸ

Դա պատահել ե կոլչակյան ֆրոնտում, 1919 թվի մայիսին: Կարմիր բանակի ջոկատներից մեկին հրաման եր տրված արագ մոտենալ կամա գետին: Ճա-

Նապարհները փչացած եյին։ Զորս կողմը ճահիճ եր գոյացել։ Կարմիր-բանակայինները մի կերպ առաջ եյին գնում, սակայն սննդեղենի և ռազմամթերքների պաշարի աբոզները 100 վերստ յետ եյին մնացել և չեյին կարողանում հասնել զորամասերին։ Ի՞նչ անել։

Ոգնության հասավ բնակչությունը։ Տղամարդիկ համարյա բոլորն ել ֆրոնտում եյին, իսկ կանայք զյուղերում 600—700 հոգուց բաղկացած խմբեր կազմելով, հերթով գնում եյին դեպի աքոզը, այդ հեռավորությունը կարում եյին վոտքով և իրենց ուսերի վրա տեղափոխում եյին հաց, փամփուշտներ և այլն։ Յերբ մի խումբը տուն եր վերադառնում, մյուս խումբն եր ճանապարհվում։ Այդ խմբերին այն ժամանակ կոչում եյին «կանանց քարավաններ»։

Մոտավորապես նույնը կատարվեց և Ուկրայինայում, Արտեմովսկի քաղաքում։ Դենիկինի զորքը հարձակում եր քաղաքի վրա և ուզում եր գրավել այն, իսկ Կարմիր ինդենի դիվիզիան պաշտպանում եր քաղաքը։ Ռումբեր և փամփուշտներ հասցնել խրամատներին հաճախ անհնարին եր։ Այն ժամանակ բանվորների կանայք և յերեխաները յերկար շղթայի պես շարվում եյին և ձեռքից-ձեռք անցնելով ուռմբերն ու փամփուշտները — հասցնում եյին դիվերին։ Իսկ իրենք բանվորներն ամենադժվար ըովեներին, հրացանները ձեռքներն առնելով՝ կարմիր-բանակայինների հետ կողք կողքի կովում եյին սպիտակ-գվարդեյականների դեմ։

### ՊԱԴՎՈԴՆԵՐ

Ֆրոնտում հաճախ հարկավոր ե լինում՝ վորևե զորամաս շտապ մի այլ կողմ տեղափոխել, մի քանի տասնյակ վերստ հեռու։ Հարկավոր ե լինում տեղափոխել ուռմբեր, փամփուշտներ, պաշարեղեն։ Վիրավորվածներին թիկունք ուղարկել, իսկ սեփական զինվորական պաղպողները հերիք չեն անում։ Այդ դեպքում ստիպված են լինում բնակչությունից վերցնելու լրացնեցիչ պաղպողներ։

Սովորաբար դա կատարվում ե հետեւյալ կերպով։ Զորամասի հրամանատարը հաղորդում է տեղական իշխանությանը՝ թե քանի պաղպող և յերբ է հարկավորվելու։ Իսկ տեղական իշխանությունը արգեն իր կողմից կարգադրում է, թե ով, ինչ կերպ և յերբ պետք է մասնակցություն ունենա այդ պահանջի բարարման գործում։

Այդպիսի դեպքերում չքավոր և միջակ գյուղացին սովորաբար չի հրաժարվում մեկ-յերկու անգամ գնալ և իր միակ ձին դուրս ե բերում իր սեփական տնտեսական աշխատանքից։ Իսկ կուլակը, վոր մի քանի ձի ունի, միշտ աշխատում է խուսափել այդ հարկատվությունից, վորովհետեւ նա Խորհրդային իշխանության և Կարմիր բանակի թշնամին ե։ Յեթե չի կարելի ուղղակի հրաժարվել, այդ դեպքում նա ձիյերը դեպի անտառն ե քշում, սայլի անիվը թագցնում կամ ուրիշ վորևե խարդախություն ե անում։

Այդ տեսակ սաբուտաժնիկներին և վնասիչներին չպետք է խնայել։ Բնակչությունը և տեղական իշխանությունը իրենք պետք է հետեւն, վորապես պաղպողների հերթը կանոնավոր կերպով կատարվի։ Մեծ վնաս չի լինի՝ յեթե մի քանի ձի ունեցողին ավելորդ անգամ ուղարկեն։ Համենայն դեպս պաղպողների պահանջը կարմիր բանակի համար պետք է լրիվ և իր ժամանակին կատարվի։

Բայց միևնույնը, ինչը վոր բնակչությունը հաճույքով տալիս ե կարմիր բանակին, կարող ե պահանջել նաև թշնամին։ Նա կարող ե պահանջել թե պաղպողներ, թե ֆուրաժ, թե սննդեղեն և թե ուղեցույցներ։ Յեթե չտաս — նա կարող ե բռնի հարկադրել։ Ի՞նչ պետք ե անել այդ դեպքում։

Դժվար ե, ինարկե, խորհուրդ տալ թե ամեն մի այդպիսի առանձին դեպքում ինչ պետք ե անել։ Քաղաքական կովի և սպիտակ-լեների դեմ պատերազմի ժամանակ, յերբ թշնամին մոտենում եր, զյուղացիները թաղցնում եյին հացը, ֆուրաժը, անասունները հեռու անուառ եյին քշում, թշնամու մոտենալու մասին հաղորդում եյին իրայիններին։ Բանվորներն ածուխի վրա ջուր եյին ածում, պարավողները և ուղին փշացնում և զինված դիմադրություն եյին ցույց տալիս սպիտակներին։ Պետք ե միշտ հիշել, վոր թշնամուն մատուցած ամեն մի ծառայություն — կամա թե ակամա — հարված ե, վոր հասցվում ե կարմիր բանակին։ Այդ

ինկատի ունենալով, ԽՍՀՄ յուրաքանչյուր ազնիվ բանվոր և գյուղացի ինքը պետք ե վճռի թե ի՞նչ և ինչպես պետք ե վարվի, յերբ թշնամին նրանից ոգնություն ե պահանջում։ Անա, որինակ, թե ինչ արեց Բառնապուլի գավառի գյուղացի Ֆյոդոր Գուլյակը, յերբ կոլչակյանները ստիպեցին նրան իրենց ուղեցույցը լինել։

Ի՞նչ ՀԱՄԱՐ ԳՈՒՅԱՑԵՎԸ ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԱԿԻ  
ՇԲԱՆԾԱՆ ՍՏԱՑԱՎ,

Թա պատահեց 1919 թ. ոգոստոսին։ Բառնառվի և ուրիշ գավառներում կոլչակի բանակի համար գյուղացիների զինակոչի հրաման եր հայտարարված։ Գյուղացիները զինակոչի չգնացին։ Նրանք կազմակերպեցին պարտիզանական ջոկատ և վճռեցին հարձակվել Բառնառվի վրա, վորպեսզի կոլչակյաններին քշեն այնտեղից։

Պարտիզանների դեմ պատժիչ ջոկատ ուղարկեցին, բայց այդ ջոկատն ամբողջովին վոչնչացրվեց։ Այն ժամանակ պարտիզանների վրա շարժվեց գեներալ Աննենիկովը՝ 15 հազարանոց իր ջոկատով։

Աննենիկովը մտավ այն գյուղը, ուր բնաջինջ եր արված առաջին ջոկատը, այրեց դա մինչև վերջին խրճիթը և սկսեց պարտիզաններին հետապնդել։ Բայց նա այդ վայրում ճանապարհներին անձանոթ եր և իրեն ուղեցույց վերցրեց տեղական գյուղացի Ֆյեդոր Ստեղանովիչ Գուլյակին։

Գուլյակը կոլչակյաններին յերկար շրջել տվեց անտառում, վորպեսզի նրանց մոլորեցնի և ճանապարհից հեռացնի. Եսկ մինչ այդ՝ պարտիզանները կարողացան թագնվել ապահով տեղերում: Այսուհետև ինքը Գուլյակն ևս փախավ ջոկատից: Յեվ այդպիսով — սպիտակները յետ գնացին դատարկաձեռն:

Ահա այդպես պետք ե գործե ամեն մի աղնիվ և գիտակից բանվոր ու գյուղացի, յերբ դասակարգային թշնամին նրա ոգնությանն ե դիմում պատերազմի ժամանակ: Դրանով նա կարմիր բանակին ողնած կլինի՝ առանց սպասելու մինչև վոր կարմիր բանակը նրան այդ մասին խնդրե: Նա այդ պետք ե ասի իր սեփական նախաձեռնությամբ այն պատճառով, վոր կարմիր բանակը պաշտպանում ե բոլոր աշխատավորների շահերը:

### ՀՈԳԱՆՔ ՄԱՐՏԻԿԻ ՄԱՍԻՆ

Աշխատավորության թշնամինների դեմ կռվելու համար մեր կարմիր-բանակայինը միշտ ել գնացել ե՝ մոռանալով նողնածություն, քաղց և ցուրտ: Բայց կուշտ, առողջ, հանգստացած մարտիկը միշտ ավելի լավ ե կատարում իր վրա դրած պարտականությունը:

Անցյալ քաղաքացիական պատերազմի ժամանակ կարմիր-բանակայինը հաճախ շատ զրկանքներ ե կըել, վորովհետև մեր յերկրը քայքայված եր: Այժմ մենք մի քիչ հարստացել ենք: Պատերազմի դեպքում պե-

տությունը կկարողանա կարմիր-բանակայինին տալ այն ամենը, ինչ նրա համար անհրաժեշտ կլինի: Բայց բնակչությունն ևս մեծ ոգնություն կարող ե ցույց տալ կարմիր-բանակայինին — նրա ուժերը ֆրոնտում կազմուրելու համար:

Որինակ՝ զորամասը հանգիստ ե առնելու գյուղում, ուր պետք ե գիշերե: Կարմիր-բանակայինը պետք ե հանգստանա, կեղափց մաքրվի, ինչ-ինչ բան կարկատի: Իսկ ժամանակ քիչ ե: Ահա այդ խնդրում պետք կլինի ոգնել կարմիր-բանակայինին, որինակ՝ բաղնիսը տաքացնել, վորպեսզի կարմիր բանակայինը կեղափց մաքրվի, լվանալ նրա սպիտակեղենը և պորտյանկաները: Տաք բնակարանում հանգիստ առնելով, մաքրվելով, նա հետեւյալ առավոտ զվարթ կերթա արշավի:

Յեթե կարմիր-բանակայինները պետք ե յերկար տարածություն կտրեն վատ ճանապարհով, — մի խնայիր նրանց տալ միշտ երկու պատվոր՝ նրանց իրերը փոխադրելու համար: Կարմիր-բանակայինը այդ դեպքում ավելի քիչ կհոգնե և իր ուժերը պահպանած կինի ապագա կոփակերի համար:

Յեթե մի գյուղում, ուր տեղավորվում ե զորամասը, վարակիչ հիվանդություն կա, անպայման հաղորդիր այդ մասին զորամասի հրամանատարին կամ կոմիսարին: Հիշիր, վոր ամեն մի հիվանդացած կարմիր-բանակային թշնամու համար ուրախություն ե, իսկ կարմիր բանակի համար՝ կորուստ:

Ողին (արաղը) և առհասարակ խմիչքը — մեր կյանքի ամենամեծ չարիքն եւ, ցարական իրավակարգի նզովված ժառանգությունն եւ: Խաղաղ ժամանակ ողին շատ լիսա եւ հասցնում, իսկ ֆրոնտին մոտ գտնված շրջանում նա հազարապատիկ ավելի վտանգավոր եւ: Հարբած ժամանակ կարմիր-բանակացինը կարող եւ պատերազմական գաղտնիք դուրս տալ, քնով անցնել իր պոստում, և պահպանած շինությունը թշնամու ազենտների առաջ բանալ: Նա այլևս անընդունակ և մարտական պահանջն իրագործել: Լավ, ազնիվ յերիտասարդը ողու շնորհիվ վոճրագործ և դափանան եւ դառնում: Ահա թե ինչու ֆրոնտին մոտ գտնված շրջանում պետք եւ անխնա պայքար մղել գաղտնի ողեգործության և ողի վաճառելու գեմ: Անուղղելի ողեգործներին և ողեվաճառներին ինքը բնակչությունը պետք եւ անվաս դարձնի: Յեթե ինքը չի կարող անել, պետք եւ զորամասերի ողնությանը դիմի, Այդպիսով կարելի յեւ փրկել կարմիր-բանակայիններին վոճիրից, վոր նա յերբեք չեր գործի զգաստ դրության մեջ: Բնակչության համար ել դա ոգտակար կլինի: Իսկ թշնամու ազենտների համար ավելի քիչ ձեղքեր կմնան՝ ուր նա կարող կլինի սպրուել իր հանցավոր աշխատանքի համար կարմիր բանակի դեմ:

Ամենից շատ ուշադրություն պետք եւ դարձնել հիվանդ և վիրավոր կարմիր-բանակայինի վրա: Նա վասվել և ընդհանուր գործի համար: Յեկ ինչքան

շուտ նա առողջանա և վոտքի կանգնի, այնքան ավելի շուտ կվերադառնա նա իր զորամասը: Իսկ ֆրոնտում ամեն մի մարտիկ թանգ եւ:

Քաղաքացիական պատերազմի ժամանակ կազմակերպում եյին «Հիվանդ և վիրավոր կարմիր-բանակայինին ողնելու շաբաթներ»: Գյուղերում և քաղաքներում հիվանդների և վիրավորների համար նվերներ եյին հավաքում — յուղ, ձու, ալյուր, թութուն, կարգալու համար գրքեր, քաղցրեղեններ և մրգեր: Հիվանդ և վիրավոր կարմիր-բանակայիններին այդ նվերներն այնքան չեյին ուրախացնում, վորքան աշխատավորների ուշադրությունը, բանվորների և գյուղացիների վողջույնները:

Բնակչությունը շատ մարտիկներ փրկեց քաղաքացիական կովի ժամանակ: Պատահում եյին սպիտակների անակնալ հարձակումներ այն գյուղերի վրա, ուր գտնվում եյին մեր զորամասերը: Սակայն վահ բոլոր կարմիր-բանակայիններն եյին կարողանում հեռանալ իրենց զորամասերի հետ: Մնում եյին նաև վիրավորները: Տեղական բնակիչները թագցնում եյին նրանց իրենց մոտ, վիրավորներին բուժում եյին տնային միջոցներով և առաջին պատեհ միջոցին ողնում եյին նրան կարմիրների հետ միանալու: Այդպիսի գյուղացին կամ բանվորը վիակը վոր եժան չի նստի իրեն, յեթե սպիտակներն իր մոտ թագցրած կարմիր բանակայինին գտնեն, բայց այնուամենայնիվ ելի

թագյնում եր: Նա վտանգի յեր յենթարկում իր  
բարեկեցությունը և նույնիսկ կյանքը՝ իր յեղբայրա-  
կց կարմիր-բանակայինների համար: Այլ կերպ ել չի  
կարող լինել: Չե վոր կարմիր-բանակայինը ամեն մի  
ժամ իր կյանքը վտանգի յե յենթարկում բոլոր աշ-  
խատավորների բարիքի համար:

### Վ.Ն.ՍԻԶՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ֆրոնտին մոտ զտնված շրջանում միշտ կդտնվեն  
մարդկե, վորոնք գիտակցաբար պարապելու յեն վնա-  
սարաբությամբ: Մեկը՝ Խորհրդային իշխանության  
դեմ ունեցած վոխից (վորովհետեւ Խորհրդային իշխա-  
նությունը զրկել ե նրան նախկին հարստությունից  
և այժմ թույլ չի տալիս նորից տղրուկ դառնալ), մի  
ուրիշը փողի համար՝ աշխատավորների և կարմիր բա-  
նակի շահերը կծախե, մի յերրորդն ել հատուկ ու-  
ղարկված ե լինելու ֆրոնտի մյուս կողմից: Թշնամու  
այս բոլոր ագենտները զանազան միջոցներով ձգտե-  
լու յեն կարմիր բանակի պարտության:

Ամենից առաջ նրանք զբաղվելու յեն լրտեսու-  
թյամբ թշնամու ոգափին: Լրտեսն ամեն ինչին ականջ  
ե դնում, աչք ե ածում, հարց ու փորձ ե անում:  
Նա հետաքրքրվում ե թե այստեղ կարմիր բանակի  
վեր զորամասերն են կանգնած, ուր են ուղեսորդներու  
նրանք, քանի պուլեմյուտ, թնդանոթ և մարտիկներ  
ունեն նրանք: Նա աշխատում է զանազան պատրվակ-

ներով շտաբներում սպրդել և այնտեղ գաղտնի դո-  
կումենտներ և հրամաններ գողանալ: Նա մի տեղ  
գործում ե խորամանկությամբ և խաբեյությամբ,  
մյուս տեղ — կաշառքով: Այն ամենը՝ ինչ վոր հաջող-  
վում ե նրան իմանալ, նա հաղորդում ե թշնամուն:

Թշնամու մի քանի ագենտներ ել ուրիշ տեսակ  
վնասարարությամբ են զբաղվելու: Նրանք փչացնելու  
յեն յերկաթուղու գծերը, պայթեցնելու յեն կամուրջ-  
ները, հրդեհելու յեն ռազմապաշարների պահեստները,  
կտրտելու յեն հեռախոսի և հեռագրի լարերը:

Կլինեն և այնպիսինները, վորոնք աշխատելու յեն  
թշնամանք ցանել կարմիր-բանակային զորամասերի և  
տեղական բնակչության մեջ. որինակ, ինքը կհրդեհի,  
իսկ մեղքը կարմիր-բանակայինի վրա կգցի: Մեկի  
ականջին կշշնջա երը թե ֆրոնտում պարտություն  
են կրել, մյուսին, յերրորդին նմանապես, և վերջի-  
վերջո բնակիչների մեջ կսկսվի պանիկա, խուճապ,  
վոր կարող ե փոխանցել նաև զինվորական մասերին:

Վոմանք ել զբաղվելու յեն մեր բանակի թիկուն-  
քում բանդիտական խմբեր կազմելով: Նրանք աշխա-  
տելու յեն միավորել մեր բոլոր դասակարգային թըշ-  
նամիններին, աշխատելու յեն խաբեյությամբ գրավել  
իրենց խմբերում զատ զատ անզիտակից գյուղացինե-  
րին, կվինվեն և կսկսեն իրենց վոճրալի գործնեյու-  
թյունը: Նրանք կհարձակեն այս կամ այն կարմիր-  
բանակայինի և խորհրդային աշխատավորների վրա,



Կկողոպտեն տեղական ժողովրդին, գնացքները կխոր-  
տակեն, կամուրջները կքանդեն, զինվորական արող-  
ների վրա կհարձակվեն: Այդ բոլորը կատարվելու յե  
նրա համար, վորպեսզի կարմիր բանակին հնարավո-  
րություն չտան հանգիստ գործել ֆրոնտում արտաքին  
թշնամու դեմ:

Կարմիր բանակն անխնա պայքար ե մղում Խոր-  
հրդային պետության բոլոր այդ տեսակ թշնամիների  
և հակառակորդի ազենտների դեմ: Պատճի գերա-  
գույն աստիճանը — վոր վճռում են ռազմական տրի-  
բունակները և Հատուկ բաժանմունքները, — այդպիսի  
վասիչների համար բոլորովին արժանի պատիժ ե:  
Սակայն կարմիր բանակի զորամասերը, վոր նոր են  
մի շրջանում տեղափորվել, միշտ չեն կարող շուտ  
յերեան հանել այդ վոճրագործներին և անվաս  
դարձնել նրանց: Այդ գեպքում կարող ե և պետք ե  
ողնության հասնի տեղական բնակչությունը: Նրան  
հայտնի յե թե ով առաջ ել Խորհրդային իշխանության  
դեմ եր, ով եր ուրախանում մեր պարտություննե-  
րին և թշնամու հաղթություններին: Տեղական բնա-  
կչը զիտե թե ով ե գործ ունեցել թշնամու զորքերի  
շտաբների և սպաների հետ՝ յեթե նրանք գեթ կարձ  
միջոց յեղել են այդ շրջանում: Նա զիտե նույնպես  
թե ով ե այստեղ նոր՝ հայտնի չե վորտեղից և ինչու  
յեկած՝ մարդը: Այդ բոլոր կասկածելի անձանց մա-  
սին պետք ե անմիջապես հաղորդել զորամասի հրա-

մանատարին կամ կոմիսարին, իսկ նրանք արդեն  
միջոց կգտնեն ստուգելու, թե արդյոք նա իսկապես  
վոճրագործ ե, լրտես ե, վսասիչ ե թե վոչ: Վոչ  
վոքի վրեժից յերկյուղ չկրեք: Խորհրդային իշխանու-  
թյունը և կարմիր բանակը կարող ե պաշտպանել  
նրանց, վորոնք ողնում են թշնամու դեմ կովելու և  
նպաստում են նրա հաղթության:

Բայց միմիայն այդ բավական չե: Հեղափոխական  
կարգ ու կանոնը թիկունքում պետք ե պահպանել  
վոչ միայն խոսքով այլ և գործով: Թշնամուն հարվա-  
ծելու համար ֆրոնտում ամեն մի մարտիկ թանգ ե:  
Կարմիր բանակը չի կարող իր մարտիկներին ցաք ու  
ցրիվ տալ՝ ամեն մի կամուրջ, հեռախոսի և հեռագրի  
ամեն մի կիլոմետրը պահպանելու համար: Կարմիր-  
բանակայինները պահպանում են միմիայն ամենա-  
կարևոր յերկաթուղու կայարաններ, կամուրջները և  
ուրիշ շինություններ ու ֆաբրիկներ: Բանվորներն  
իրենք են ուժեղացնում և զգաստացնում գործարան-  
ների և ֆաբրիկների պաշտպանությունը, գյուղացիք  
իրենց վրա յեն հանձն առնում իրենց գյուղերի շրբ-  
ջանում կամուրջների, հեռագրաթելերի և ուրիշ շի-  
նությունների պաշտպանության պատասխանատվու-  
թյունը:

Նույնը և հականեղափոխական տարրերի և բան-  
դիտների դեմ պայքարում, յերբ նրանք յերեան են  
գալիս մի շրջանում: Յեթե ներկա յե բավականա-

չափ ուժեղ զորամաս, նա ինքը նրանց վերջ կդնի: Իսկ յերբ զորամաս չկա, կամ սակավաթիվ ե, ապա ազգաբնակչությունը տեղական իշխանության առաջին կոչով պետք ե զինվի և բանդիտների գեմ դուրս գա և արագ վերջ տա նրանց: Դա կազատի ազգաբնակչությունը նոր հարձակումներից և կողովտումներից, իսկ Կարմիր բանակին կազատի ավելորդ հոգ սերից՝ գյուղում գործելու համար:

#### ԱՎԵԼՑՈՒԿՆԵՐ ՅԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Գործիչ բանակն ունի իր պարենավորման պահեստները, հացի փոները, անսառունների հոտեր, վորոնցից մատակարարվում են ֆրոնտում գործող զորամասերը:

Բայց վերցնենք այնպիսի մի դեպք, յերբ բերքը հավաքելուց հետո տեղական բնակչությունը, խոտի, գարու, գետնախնձորի ավելցուկներ ունի. կան և ավելորդ անսառուններ: Զորամասերն այդ դեպքում կարող են գնել տեղական բնակչության իրեն հարցավոր մթերքները: Դա թե տեղական բնակչության համար հարմար ե և թե զորամասերի համար ձեռնուր յե, վորովհետև կարիք չի լինի ձիերը տասնյակ վերստ քշել:

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր զորամասերը վճարելու յեն կառավարությունից հաստատված գներով:

Խաղաղ ժամանակ կուլակն ու սպեկուլյանտը միշտ ոգտվում են հացի վերաբերյալ դժվարություն-

ներով և թագյնում են հացը, սպասում են՝ մինչև վոր գները կբարձրանան, վորպեսզի հետո ավելի շատ քերթեն բանվորից և չքավոր գյուղացուց: Զքավոր և միջակ գյուղացին, ընդհակառակն, զիտակցում են, վոր բանվորն առանց հացի չի կարող գործարանում աշխատել, կարմիր-բանակայինը չի կարող զինվորական գիտությունը սովորել: Նրանք իրենց ավելորդ հացը ծախում են պետության և փոխարեն ստանում են, կոռպերացիայի միջոցով, ներկայումս հասրավոր յեղածի չափ ամենաեժան գներով, քաղաքի ապրանքներ:

Մանավանդ—պատերազմի ժամանակ: Այդ դեպքում պետք կլինի վերջին կտորից բաժին հանել կարմիր-բանակայինին՝ յեթե վորևե պատճառով թիկունքից պարենը իր ժամանակին չհասնի: Կպատահի նաև, վոր զորամասը կանխիկ փող չի ունենա, վորպեսզի տեղն ու տեղը վճարի վերցրած պարենի գինը: Այդպիսի դեպքերում զորամասը ստացական ե տալիս, իսկ մոտակա դաշտային գանձարանը այդ ստացականով վճարում ե հարկավոր գումարը: Ով նվիրված ե Խորհրդային իշխանության, ով ցանկանում ե Կարմիր բանակի հաղթությունը, նա ամեն տեսակ հանգամանքում նպաստելու յե զորամասերին՝ պարեն պատրաստելու գործում:

Նա իր պաշարից կտա ինչքան վոր կարող ե. նա կոգնի յերևան հանելու նրանց, վորոնք նենդամառւ-

թյամբ ծածկում են իրենց հացի և ուրիշ ապրանք-ների պաշարները կարմիր բանակից, իսկ հետո գաղ-տուկ ծախում են յեռապատիկ գներով։ Այդպիսի սպեկուլյանտներին ուզմական ժամանակի որենք-ները դաժան պատիժներ են տալիս։ Բնակչությունն ինքը պետք ե ոդնի նրանց դեմ պայքարելու գործում։

Սակայն ինքնըստինքյան հասկանալի յե, վոր թըշ-նամուն մատուցած ամեն մի ծառայություն, լինի դա ապրանքներով թե մննդեղենի պաշարով, ամրաց-նում ե նրա դիրքը և մնաս ե բերում թե մեր Միու-թյան աշխատավորներին և թե կարմիր բանակին։ Հիշեցեք, թե մի ժամանակ ինչպես եյին կողոպտում գերմանացիք Ուկրայինայի գյուղերն ու քաղաքները, և կամ թուրքերը ինչպես եյին թալանում Հայաս-տանը և հարյուրավոր գնացքներով ուղարկում եյին այն ամենը, ինչ բոլորովին հարկավոր չեր իրենց բանակին։ Նույնպես եյին վարդում և ոտարազգի բանակները Ղրիմում, Հեռավոր Արևելքում և Հյու-սիսում։

Այդ տեսակ թալան, ինարկե, չի կարելի թույլա-տրել։ Թշնամու բանակից ամեն ինչ պետք ե լավ թագցնել, իսկ թալանածը պետք ե փչացնել, վոր-պեսզի նրանից նա չկարողանա ոգտվել։

Յեթե ցանկանալ՝ կարելի յե անել այդ։ Ինչպես եյին վարդում, որինակ, սպիտակ-գվարդեյականների մոտ գործարաններում բռնի աշխատող բանվորները.

Նրանք փոխանակ վառողի, ավազով լցրած ոռւմբեր ելին բաց թողնում։ Իսկ քանի քանի գործադուլներ սարքեցին նրանք յերկաթուղիների վրա և գործա-րաններում, վորպեսզի վասեն սպիտակ բանակների մատակարարման գործին, ուզմամթերքները ֆրոնտ տեղափոխելու գործին։

Ֆրոնտում զորամասերը հաճախ կարիք կզգան նաև բնակչության աշխատանքային ոգնության։ Թըշ-նամին նահանջելիս սովորաբար քանդում ե կամուրջ-ները, փչացնում ե ուղիները։ Դրանք պետք ե ան-միջապես ուղղել, վորպեսզի կարմիր բանակի զորա-մասերն իրենց արտիլերիայով կարողանան արագ հետապնդել հակառակորդին և ջարդել նրան նախ քան նա կկարողանա նոր ուժեր հավաքել։ Կամ թե կարմիր բանակի զորամասերը կարիք կունենան իրենց դիրքերն ամրացնելու նոր խրամատներ փորելու, արգելացներ սարքելու, վորպեսզի թշնամու գրոհը կանգնեցնեն։ Այդ տեսակ աշխատանքներն արագ ավարտելու համար կարիք կզգացվի ավելորդ բան-վոր ուժի և ոգնության։

Այդ տեսակ աշխատանքների համար կանչված ամեն մի մարդուց պահանջվում ե յեռանդու աշխա-տանք, վորպեսզի գործը ժամանակին ավարտվի։ Հա-կառակ դեպքում մեր զորամասերն ավելորդ զոհեր կտան, թշնամին կարող ե դարձյալ մի քանի բնակ-ված վայրեր գրավել, խաղաղ բնակչությունը կվասպի։

Յեկ ընդհակառակն, մեր զորամասերի հաջողությունը աշխատավորների նորանոր մասսաներ կազմատի բուրժուազիայի իշխանությունից, Փրոնտի գիծը առաջ կմղվի և թիկունքի բնակչությունը ավելի հաճախատ կարող ե զբաղվել իր անձնական աշխատանքով:

### ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ

Ամեն մի զորամաս ուղարկում ե դեպի առաջ իր սեփական հետախուզվիչներին, վորպեսզի իմանա թե թշնամին վորտեղ ե, ինչքան ուժ ունի, վոր կողմն ե դիմում նա: Հետախուզությունը զորամասի հրամանատարի աշքն ու ականջն ե: Նրա միջոցով նա տեսնում ե լսում ե թե ինչ ե կատարվում իր առաջ և կարող ե ուղիղ վճռել թե ինքն ինչ պետք ե անի: Առանց հետախուզության զորամասը կարող ե թշնամու թակարդը ընկնել և կորստի մատնվել:

Հետախուզության համար կարմիր բանակի զորամասերին մեծ ոգնություն կարող են ցույց տալ տեղական բնակիչները: Նրանց հայտնի յեն այնպիսի ուղիներ և կածաններ, վորոնցով անցնել վոչ մի զորամասի մտքովն անգամ չի անցնի: Տեղական բնակիչը այդպիսի կածանով հեշտությամբ կանցնի դեպի հարևան գյուղը՝ ուր գտնվում ե թշնամին, շատ բան տեղեկանալ նրա մասին իր ազգականների և ծանոթների միջոցով և վերադառնալ կարևոր տեղեկություններով:

Ահա մի որինակ. 1919 թ. նոյեմբերին, 51 դիվիժիայի 459 գնդի մի բատալիոն 30 վերստ առաջ նետվեց դեպի կոչակի զորամասերի թիկունքը և մի գյուղ գրավեց: Շուտով բատալիոնի հրամանատարի մոտ մի գյուղացի յեկավ, վոր նոր եր վերադարձել մի ուրիշ գյուղից (40 վերստ այնաեղից հեռու) և հաղորդեց, վոր դեպի այդ կողմը գալիս ե գնդապետ Կրասինիկովի ջոկատը, իսկ Կրասինիկովը ամբողջ այդ շրջանում հայտնի յեր իր գաժան պատիճներով, վորոնց նա յենաբարկում եր բանվորներին և գյուղացիներին:

Այդ տեղեկությունները ստանալով, բատալիոնի հրամանատարը իր կարմիր-բանակայիններին տեղավորեց այն ուղղությամբ, վոր կողմից պետք ե հարձակում գործեր սպիտակ ջոկատը, և ինքը հանկարծակի հարձակվեց ու ջարդեց նրան: Վեցըրին 50 գերի, մեկ սլուշամյոտ, 100 հրացան, շատ փամփուշներ և ձեռքի գրանատներ: Կարմիր-բանակայիններից և գյուղացիներից վոչ վոք չվնասվեց:

Քաղաքացիական պատերազմի ժամանակ, հետախուզական գործին հասցրած այդ տեսակ ոգնության շատ որինակներ կան: Պատահում եր, վոր սպիտակ-ների ջոկատը գալիս եր մի գյուղ և տեղավորվում՝ զիշերելու համար: Տանտերը ստիպված ընդունում եր նրանց, բայց գաղտուկ, իր ընտանիքից մեկնումնեկին ուղարկում եր հարևան գյուղը, ուր կարմիրներ կային: Կարմիրները զիշերով հանկարծ շրջապատում եյին

գյուղը և սպիտակներին վոչնչացնում: Այդ տեսակ գործում նույնիսկ 12—13 տարեկան յերեխան կարող ե լավ ծառայություն մատուցել Կարմիր բանակին:

Հետախուզություն կատարում ե, իհարկե, նաև թշնամին: Նրա հետ պետք ե չափազանց զգուշ լինել, վորպեսզի չասել վոչինչ ավելորդ բան վոր կարող ե մերոնց վնասել: Ամենից լավն այն ե, վոր թշնամու բոլոր հարցերին պատասխանել «չգիտեմ»: Իսկ յեթե առիթ ներկայանա, պետք ե վարվել այնպես, ինչպես վարվեց Գուլյան, վորի մասին քիչ վերև պատմեցինք:

#### ԹՇՆԱՄՐՈՒ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՄՐԱՎԻՆ

Մեր թշնամին, վորը մեր դեմ պատերազմ ե պատրաստում — համաշխարհային բուրժուազիան ե: Իսկ բուրժուական բանակներում զինվորների մեծ մասը բանվորներ և գյուղացիներ են: Ուրեմն ինչո՞ւ յեն նրանք պատերազմում Խորհրդային Միության բանվորների և գյուղացիների դեմ:

Այդ նրանց մեղքը չե, այլ նրանց դժբախտությունը: Բուրժուազիան ոգտվում է իր իշխանությամբ, վորպեսզի կեղեքի բանվորներին և գյուղացիներին, տղիսության և իրավազրկության մեջ պահի նրանց, բռնի հավաքի և պատերազմի դաշտ ուղարկի նրանց, Բացի դրանից, բուրժուազիային ծառայում են հարյուր հազարավոր տերտերներ և վարժապետներ, գրողներ

և գիտնականներ, վորոնք միահամուռ աշխատում են խարել և հիմարացնել ժողովրդին: Նրանք սովորեցնում են բանվորներին և գյուղացիներին, վոր բուրժուազիայի իշխանությունը աստծուցն ե, վոր բուրժուազիան հոգում ե բոլոր ժողովրդի բարիքի համար: Նրանք հավատացնում են, վոր բուրժուազիան պատերազմի դեմ ե, իսկ կոմունիստներն այնպիսի չարագործներ են, վորոնք իրենց Կարմիր բանակով ուզում են ամբողջ աշխարհը նվաճել:

Շատ բանվորներ և գյուղացիներ, շնորհիվ իրենց անզիտակցության, դեռևս հավատում են այդ բոլորին, ուստի և բուրժուազիային դեռևս հաջողվում ե իրենց յերկրների աշխատավորներին մեր դեմ պատերազմի մղել: Բայց կդա ժամանակ յերբ նրանք կհասկանան այդ խաբեյությունը: Յեվ այն ժամանակ նրանք կհրաժարվեն մեր դեմ պատերազմելուց և զենքը կդարձնեն իրենց սեփական բուրժուազիայի դեմ, մեր ընդհանուր դասակարգային թշնամու դեմ:

Մենք արդեն տեսել ենք այդ տեսակ որինակներ: 1919 թ. ֆրանսիական նավատորմիդն և զորքերը յեկան Ողեսսա Դենվիլինին ոգնելու համար ընդդեմ Կարմիր բանակի: Մեր կոմունիստները սկսեցին գաղտնի բացատրել Ֆրանսիայի զինվորներին և նավատօններին թե ինչու յեն բերել նրանց այնտեղ: Յեվ շուտով նրանք հրաժարվեցին ուսւ և ուկրայինցի գյուղացիների և բանվորների դեմ յելնել: Նավատօններն ապ-

ստամբեցին։ Ապստամբվածների թվումն եր և բոլորին հայտնի ընկեր Մարտի, վորի անունով մեղ մոտ շատ գործարաններ են կոչվում։ Ֆրանսիական կառավարությունը ստիպված յեղավ յետ կանչել իր զորքերին և նավատորմիղը, վորպեսզի նրանք հնազանդությունից վերջնականապես դուրս գան։

Շատ բանվորներ և գյուղացիներ են կովել Կարմիր բանակի դեմ՝ կոլչակի, Դենիկինի, Վրանգելի և բանդիտ Մախնոյի սպիտակ գվարդիայի շարքերում։ Վոմանք այն պատճառով՝ վոր բռնի եյին գինակոչի յենթարկված, վոմանք ել շնորհիվ իրենց անգիտակցության։ Նրանք չեյին հասկանում, վոր սպիտակվարդիայի բանակում նրանք ծառայում են կալվածատերին և կապիտալիստին, և վոր Կարմիր բանակը բանվորների և գյուղացիների շահերն ե պաշտպանում։ Իսկ յերբ նրանց այդ բացատրում եյին, նրանք Կարմիր բանակի կողմն եյին անցնում։ Այդ եր սպիտակվարդիայի բանակների կործանման զիմավոր պատճառներից մեկը։

Բուրժուական բանակներում գտնվող բանվորները և գյուղացիները մեր թշնամիները չեն, նրանք հրաժարվեն մեր դեմ պատերազմելուց, յեթե հասկանան, վոր նրանք մեղ հետ կովելու վոչ մի պատճառ չունեն, վոր Կարմիր բանակը կովում ե բուրժուազիան տապալելու համար, ամբողջ աշխարհի աշխատավորներին ազատազրելու համար։ Յեթե նրանք մինչև

այժմ չեն հասկանում այդ, ապա պետք ե նրանց բացատրել այդ։

Այդ կարելի յե անել թերթիկներով, կոչերով, բրոցուրնելով և պլակատներով, վոր պատերազմի ժամանակ ցրում են թշնամու բանակում։ Այդ թերթիկներն ու կոչերը գիմում են անում բանվորներին և գյուղացիներին, վորպեսզի նրանք թշնամու բանակց Կարմիր բանակի կողմն անցնեն և սրա հետ միասին համաշխարհային բուրժուազիայի դեմ վճռական կովի յելնեն։

Պատերազմի ժամանակ այդ թերթիկների, լրագրների և կոչերի տարածումը թշնամու զինվորների մեջ շատ կարևոր գործ ե։ Տեղական բնակչությունը շատ կարող է ոգնել այդ գործում։ Թերթիկները կարելի յե սատանալ Կարմիր բանակի յուրաքանչյուր զորամասի կոմիսարից։ Տեղական բնակիչն ինքը կամ իր վստահելի ընկերոջ միջոցով հեշտությամբ կարող է ցըել այդ թերթիկներն այն խրճիթների մոտերքը, ուր գիշերում են զինվորները, փակցնել ցանկապատերին, ջրհորների մոտ, ուր զինվորները ձիյերին ջուր են խմեցնում։ Պետք ե աշխատել թերթիկներն այնպիսի տեղերում ցըել և փակցնել, ուր զինվորները լինում են առանց սպաների, այլ կերպ՝ սպաները կիզեն այդ թերթիկներն և՝ բացի այդ՝ կպատժեն զինվորներին։ Ինքդ ել չընկնես սպայի ձեռքը, գործիր զգուշ, վորպեսզի թշնամին քեզ չնկատի։

Յեթե հանգամանքները ստիպում են կարմիր-բաշակային զորամասին նահանջել, կոմիսարին խնդրիր վորպեսզի թերթիկների և կոչերի պաշար թողնի ձեզ մոտ: Մինչև վոր թշնամին քո գյուղումն ե, դու կարող ես կամաց կամաց ցըել զինվորների մեջ: Համոզված յեղիր, վոր քո աշխատանքը զուր չի անցնի: Շատ զինվորներ կարդարով այդ թերթիկները կիմանան իրենց բուրժուազիայի մասին ճշմարտությունը, կիմանան Խորհրդային իշխանության մասին, կարմիր բանակի մասին: Նրանք կսկսեն մտածել այդ հարցերի մասին: Վաղ թե ուշ՝ նրանք ախորժակ կկորցնեն կարմիր բանակի դեմ կովելու: Շատերը մեր կողմը կանցնեն, կամ բանակից կլքեն: Դա կժուլացնի թշնամու ուժերը և կհեշտացնի մեր հաղթությունը նրանց դեմ:

Ֆրոնտին մոտ գտնված զրջանի տեղական բնակիչը շատ բան կարող ե անել թշնամու զինվորի հետ ունեցած իր նույնիսկ հասարակ խոսակցությամբ կամ զրույցով: Յեթե քո տանը զինվորներ են տեղափորել, իմացիր թե ովքեր են նրանք իրենց ծագումով—բանվորներ, բարակներ թե չքափոր գյուղացիներ: Դրանց հետ կարող ես համարձակ խոսել: Կուլակի, վաճառականի կամ կալվածատերի վորդու հետ զուր քամու չտաս խոսքերդ: Իսկ մնացածներին պատմիր թե ինչպես են ապրում մեզ մոտ բանվորներն ու գյուղացիները, թե ինչպես են աշխատում և ինչպես են նրանք կառավարում իրենց պետությունը, աշխատիր

վոր զինվորը համեմատի իր գյուղական կացությունը քոնի հետ: Պատմիր ինչ վոր զիտես կոմունիստական կուսակցության մասին: Քո զըույցով դու կասկած կզարթեցնես զինվորի զիտակցության մեջ թե ինչու համար ե նա կովում: Իսկ այդ կասկածը կզարգանա և իր պտուղները կտա:

Յեթե թշնամու բանակում հանդիպես ազգակից զինվորի—վոր շատ հավանական ե, և բացատրվել կարողանաս նրա հետ, տեղեկացիր թե ինչպես ե ապրում նա բուրժուազիայի իշխանության տակ, պատմիր թե ինքդ ինչպես ես ապրում և թե ինչ ե արել ԽՍՀՄ ազգությունների համար Խորհրդային իշխանությունը: Այս ժամանակ զինվորն ինքը կհասկանա, վոր միայն Խորհրդային Միության մեջ են բոլոր ազգությունները համահավասար, և վոր զանազան ազգությունների մեջ թշնամանք չկա: Իսկ բուրժուական պետության մեջ ազգային փոքրամասնությունները սոսկալի ճնշված դրության մեջ են—այդ հիշեցրու նրան:

Վիրավոր զինվորին, յեթե նրան չեն վերցրել վոչ իր և վոչ ել մեր զորքերը, պետք ե ոգնել, առաջին ոգնություն հասցնել և ապա ուղարկել մոտակա կարմիր-բանակային զորամասը: Նույնպես և գերի զինվորին պետք ե ընկերաբար վերաբերվել, մանավանդ յեթե նա բանվոր ե կամ գյուղացի: Զե՞ վոր նա մեղավոր չե, վոր իրեն բռնի կերպով պատերազմի յեն ուղարկել Խորհրդային Միության դեմ: Իսկ մենք

պետք ե վոչ միայն խոսքով, այլ և գործով ապացուցենք, վոր մենք նրան թշնամի չենք համարում։

Վիրավորը կամ գերին անպայման նամակ կղրի իր հարազատներին և ծանօթներին թե ինչպես են վարդում նրա հետ ԽՍՀՄ մեջ։ Իսկ դա ամենալավ ոգությունը կինի մեղ համար։ Զե՞ վոր բուրժուազիան իր զինվորներին ներշնչում ե՞ իբր թե Կարմիր բանակում և ամբողջ ԽՍՀՄ մեջ գաղանների պես են վարդում գերիների հետ, թշնամու բանակից մեր կողմնանցածի հետ։ Այդ պատճառով շատերը չեն վստահանում մեր կողմնանցածի անցնել և գերի ընկնել։ Գերիների և վիրավորների նամակները կողնեն մեղ՝ մեր բանվորների, զյուղացիների և կարմիր-բանակայինների վերաբերմամբ բուրժուական զրպարտությունները ցրելուն։ Յեվ թշնամու բանակից կամավոր կերպով գերի ընկնողների և դասավիքների թիվը պետք ե ավելանա։

Սակայն հիշեր, վոր ամեն մի դասավիքի չի կարելի հավատալ։ Մեկը իրոք դալիս ե նրա համար, վոր այլևս չի ցանկանում կուվել իր բուրժուազիայի համար։ Իսկ մյուսը — միայն կեղծում ե և յեկել ե թշնամու կողմից վորպես լրտես։ Խաղաղ ընակիչը դժվար թե կարող ե տարբերել այդ։ Ուստի և թշնամու բանակի յուրաքանչյուր զինվորի, վոր իրեն դասավիք ե կոչում, պետք ե բռնել և առանց ավելորդ խոսակցության մեր մոտակա զորամասն ուղարկել։ Դա ոգտակար կինի թե նրա և թե մեղ համար։

### ԿԱՐԻՄԻՐ ՊԱՐՏԻԶԱՆՆԵՐ

Ինչ եյին անում կարմիր պարտիզանները քաղաքացիական պատերազմի ժամանակ մեր թշնամու թիւկունքում։

Նրանք սովորաբար փոքրից եյին սկսում։ Հավաքվում ե սպիտակ իշխանությունից թագնվող մի խըմբակ — կոմունիստներ, խորհրդային պաշտոնյաններ, վորժամանակին չեն կարողացել նահանջող կարմիր զորքերի հետ միասին հեռանալ, ձերբակալությունից փախած բանվոր, գերությունից փախած կարմիր-բանակային, զինակոչից կամ պատժից խուսափող զյուղացի։ Դրանց բոլորին միավորում ե թշնամու զեմ տածած ատելությունը, թշնամու, վոր խախտում ե մեր խաղաղ աշխատանքը և պատերազմի հարկադրում մեղ։

Այդպիսի մի փոքրիկ խմբակ հետզհետե կապվում եր ուրիշ բանվորների և զյուղացիների հետ, վորոնք թագնվում եյին սպիտակներից քաղաքում կամ զյուղում։ Զանազան միջոցներով նրանք զենք և փամփուշներ եյին ձեռք բերում։ Որինակ, յերբ գերմանացիք Ուկրայինայում եյին, կիւռում մեր գաղանի գործողները Գերմանիայի զինվորներից հրացաններ և նույնիսկ պուլեմյոտներ եյին գնում։ Պարտիզանները Սիբիրում սկզբները վորսի բերդանկաներով եյին դուրս գալիս, և հաճախ նույնիսկ առանց հրացանների, լոկ կացիներով, գերանդիներով և ինքնազործ զենքով։

Պարտիզանների շատ ջոկատներ իրենք եյին իրենց համար պատրոններ պատրաստում բանացրած գիլզաններից և իրենք եյին գնդակներ հալում։ Մեծ ջոկատների համար անհրաժեշտ զենք ու պուլեմյուտները պարտիզանները հետզհետե ձեռք եյին բերում սպիտակների ղեմ մղած կոփվելում։

Սկզբում, սովորաբար, տեղի եյին ունենում մանր ընդհարումներ, վոստիկանների և ստրաժնիկների, առանձին զինվորների և փոքր ջոկատների վրա հարձակումներ։ Պարտիզանական ջոկատներն աստիճանաբար մեծանում, բազմամարդ եյին դառնում, զինվում եյին, և այն ժամանակ արդեն սկսում եյին ավելի վճռական գործողություններ։ Նրանք վոնսում եյին գյուղերից սպիտակ իշխանությունը, գրավում եյին նույնիսկ քաղաքներ, հարվածում եյին սպիտակների թիկունքը ու աբոզը, նույնալես և յետ մնացող զորամասերը։ Նրանք թույլ չեյին ատամ գյուղերում հարկեր հավաքել, սննդեղններ հասցնել քաղաքին, արգելք եյին լինում փայտ և ածուխ մթերելու յերկաթուղու և գործարանի համար, վորոնք գործում եյին ինքնապաշտպանության համար և խանգարում եյին զորքերի դեպի ֆրոնտը տեղափոխելուն։

Ոգտվելով անտառի ուղիներով և տեղական վայրի ծանոթությամբ, պարտիզանները հարձակումներ եյին գործում անակնակ և համարձակ, արագ թագնվում և նորից հարձակվում... այս անգամ արդեն մի ուրիշ

տեղ մի քանի տասնյակ վերստ հեռու, ուր նրանց ամենից քիչ եյին սպասում։

Պարտիզաններին բոնելու համար սպիտակները հաճախ ստիպված եյին լինում մեծ ուժեր ուղարկել։ Այդպես, որինակ, Բառնառուի գավառում պարտիզանական ջոկատը մոտ 400 հոգուց եր բաղկացած և սկիզբը միմիայն 25 հրացան ուներ, իսկ նրա դեմ զուրս յեկավ գեներալ Աննենիկով 1,500 մարդուց բաղկացած ջոկատով — հեծելազորքով և պուլեմյուտներով։

Ղրիմում Վրանգելի ժամանակ պարտիզանները յերբեմն միայն մի քանի հարյուր հոգի եյին, իսկ Վրանգելը ստիպված եր նրանց դեմ համարյա յերկու գիլիզիա ուղարկել։ Սիբիրում Կուչակը ստիպված եր 100,000 զորք ուղարկել Աշխասկի և Մինուսինսկի շրջանների պարտիզանների դեմ։ Այսեղ գործում եյին հայտնի պարտիզաններ Շչետինկին և Կրավչենկոն։ Ուրեմն մտածեցէք թե ինչպես կհեշտանա կարմիր բանակի զործը յերբ թշնամին տասնյակ հազարվոր զինվոր կվերցնի ֆրոնտից։

Սպիտակ-գվարդեյական զորքերի նահանջի ժամանակ պարտիզանները հաճախ քարուքանդ եյին անում նրանց աբոզը, նրանց զրկում եյին պարենից և զինամթերքից։ Իսկ առանց այդ բոլորի զորամասերը շուտ չեյին կարող կոփիլ սկսել։ Պարտիզանների հաջողությունները և հոչակը արագ տարածվում եր շրջակա քաղաքներում և գյուղերում։ Պարտիզաններին միա-

նում եյին բոլորը, վորոնք դժգո՞ր եյին սպիտակների  
իշխանությունով։ Ապստամբում եյին ամբողջ շրջան-  
ներ։ Բանվորները քաղաքում ապստամբություն եյին  
պարտաստում և պայմանավորվում եյին պարտիզան-  
ների հետ, վորակեսզի նրանք քաղաքի վրա հարձակում  
գործեյին այն ժամանակ, յերբ բանվորները ներսում  
ապստամբություն կակսեն։ Կարմիր բանակի մասերը  
պարտիզանների հետ պայմանավորվում եյին և մի  
ընդհանուր պլանով եյին գործում սպիտակ-դվարդեյա-  
կանների դեմ։ Պարտիզանական շատ ջոկատներ կար-  
միր բանակի կազմն եյին մտնում և ամրացնում  
եյին նրան իրենց քանակությամբ և հեղափոխական  
թափով։

Պարտիզանական ջոկատների համար ամենավտան-  
գավորն այն ե, յերբ նրա կազմի մեջ մտնում են  
քրեական հանցավորներ։ Վոճրագործները պարտիզա-  
նական շարժման մեջ հարստանալու և կողոպտելու  
միջոց են տեսնում։ Նրանք յերկպառակություն և  
ջլատումն են մտցնում պարտիզանական ջոկատնե-  
րում, խախտում են դիսցիպլինը և թշնամանք են ցա-  
նում բնակչության և ջոկատների մեջ։ Վոճրագործ-  
ներ, գողեր, սրիկաներ, արկածախնդիրներ պարտի-  
զանական ջոկատներում անհանդուրժելի յեն, նրանց  
պետք ե ուղղակի վսչնչացնել, թե չե նրանք գործը  
կորսարի կմատնեն։ Մեծ վնաս են հասցնում նաև այն  
պարտիզանները, վորոնք հենց առաջին անհաջողու-

թյունից յենթարկվում են պանիկայի, սկսում են  
փախչել և մյուսներին ել գրավում իրենց յետեկից։

Պետք ե հիշել, վոր կռվի ժամանակ կարող են ան-  
հաջողություններ լինել. յերբեք չպետք ե հավատը  
կորցնել իր սեփական ուժերի և այն արդար գործի  
վերջնական հաղթության մեջ, վորի համար կովում  
են պարտիզանական ջոկատները և կարմիր բանակը։  
Վորակեսզի պարտիզանական ջոկատը ամուր լինի, պետք  
ե միշտ գլխավոր նշանակել վստահելի, փորձված,  
կայուն հեղափոխականներին, կոմունիստներին։ Յեկ  
ամեն մի կուսակցական պետք ե իմանա, վոր նա  
կռվում ե Խորհուրդների իշխանության համար դասա-  
կարգային թշնամինների դեմ, ինչպես վոր այդ գիտե  
մեր ամեն մի կարմիր-բանակայինը։ Դրանումն ե մեր  
ամրության, մարտունակռւթյան և անհաղթելիության  
գրավականը։

### ՎԱՏԵՐԻ ՈՐԻՆԱԿԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ. ՄԻ ԴԱՏԻՐ

Պատերազմի ժամանակ կարմիր բանակի շարքերը  
կանչված միլիոնավոր գիտակից բանվորների և գյու-  
ղացիների մեջ կգտնվեն այնպիսիները, վորոնք ան-  
գիտակից են կամ յերբեմն նույնիսկ հանցագործներ  
են։ Նրանցից կարելի յե սպասել այնպիսի վարմունք  
վոր կիսայտառակե բանվորացյուղացիական կարմիր  
բանակի մարտիկի պատվագոր կոչումը։ Կպատահեն  
նաև առանձին դասալիքներ, վորոնք կդավաճանեն

իրենց ընկերներին և վտանգավոր վայրկյանին պատերազմի դաշտից կփախչեն: Կպատահեն նաև տեղական բնակիչներին նեղացնելու և նրանց ունեցածը յուրացնելու առանձին փորձեր: Կինսեն նաև զենքին, ձիյերին, ուազմամթերքներին անփույթ վերաբերմունքի դեպքեր: Կպատահեն նույնիսկ ուազմամթերքը սպեկուլյանտներին ծախելու դեպքեր:

Կարմիր բանակի հրամանատարներն ու կոմիսարները և զինվորական տրիբունալները այդ տեսակ վարմունքների համար վոչ վոքին չեն ինսյում և խստիվ պատժում են: Այդ աեսակ յերեսույթներ կարմիր բանակի մեջ անհանդուրժելի յեն: Իր կողմից յուրաքանչյուր ազնիվ բանվոր և գյուղացի պետք ե ոգնի հրամանատարության՝ կարմիր բանակի շարքերը սպըռտած վոճրական տարրերի դեմ կովելու համար: Չթագցնել վոչ մի դասավիքի, պետական գույքի վաճառման վոչ մի դեպք ցույց չտալ, չլռել՝ յեթե տեղական բնակիչներին հասցվում ե վորևե վիրավորանք կամ բռնություն են գործ դնում նրա վրա: Տեղական բնակիչներն իրենք պետք ե ոգնեն պատասխանատվության յենթարկելու աւդախիներին՝ ըստ ուազմական ժամանակի որենքների:

Սակայն կարմիր-բանակայինի առանձին անվայել վարմունքի դեպքերով չդատես ամբողջ զորամասի մասին, ամբողջ կարմիր բանակի մասին: Հիշեր, վոր կարմիր բանակը — բանվոր դասակարգի և գյուղացու

մարմինն ու արյունն ե: Հիշեր, վոր նա պայքարում բոլոր աշխատավորների շահերի համար, պաշտպանում ե մեր սոցիալիստական խաղաղ շինարարության ընդհանուր գործը: Դրա համար կարմիր բանակը պատրաստ ե ամեն տեսակ դժվարություններ և զրկանքներ տանել: Հիշեր, վոր նրան սպասում ե պայքար խոշոր և ուժեղ հակառակորդի դեմ:

Այդ մեծ պայքարում հանուն Խորհրդային իշխանության, հանուն կոմունիզմի հաղթանակի ամբողջ աշխարհում, դու յել պատրաստ յեղիր ամեն մի բոպե ոգնելու այդ հաղթանակին ինչով վոր կարող ես: Սերտ, միահամուռ ուժերով հարձակվենք թշնամու վրա:

Յեվ այն ժամանակ մենք կհաղթենք:

ԽԱՀՄ ԺՈՂ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ (ՑԵՆՏՐԻԶԴԱՏ).  
Մոսկվա, Никольская, 10, Центриздат.

### Լ Ս Խ Ս Տ Ե Ս Ա Ն

Լենին. — Պատերազմի մասին . . . . .	95 կ.
Պատերազմի գեմ պատերազմ . . . . .	10 »
Խնչով կարող և ոգնել բնակչությունը Կարմիր բանակին պատերազմի ժամանակ . . . . .	5 »
Խեր անտեսությունը հինգ տարուց հետո . . . . .	5 »
Խնչ ասաց կուսակցության XVI կռնֆերենցիան . . . . .	15 »
Պայքար աջ վտանգի և հաշտվողականության գեմ . . . . .	23 »
Աջ թեքումը կուսակցության շաղբերում . . . . .	25 »

### Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ա Կ Ե Ն

Լենին. — Խնչ անել:

Լենին. — Մի քայլ առաջ յերկու քայլ հետ:

Լենին. — Վյուղացիության մասին (քրեսթոմատիքա):

Սլեպկով. — Թիոլոգիան և մաբրսիզմը.

ՊԱՀԱՆՁԵՑԵՔ ՄԵՐ ԳՐԱՑՈՒՑԱԿԸ



ՀՀ Ազգային գրադարան



NL0221650

54.

26954

41.590

63/

1  
2

Библиотека  
Институт  
Востоковедения  
Академии Наук  
СССР



---

Чем население  
поможет  
Красной армии  
во время войны

---

На армянском языке

---

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С. Р.  
Москва; центр; Никольская, 10